



*ՀԱՄԱՊԱՐՓԱԿ և ԸՆԴՀԱՅՆՎԱԾ
ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ.
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ
ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ*

Ստեղծա Միքայելյան, Արսեն Կարապետյան, ազգային փորձագետներ,
Երևան, 19 փետրվարի 2019թ.





ՋՐԻ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ԴԻՐԵԿՏԻՎ (2000/60/ԵՀ ՀՐԱՀԱՆԳ՝ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ)

Կիրառվում են սույն Հրահանգի հետևյալ դրույթները.

- Ներպետական օրենսդրության ընդունում և իրավասու մարմնի (իրավասու մարմինների) սահմանում
- Գետերի ավազանների տարածքների որոշում և համապատասխան համակարգում՝ ուղղված աշխարհի գետերի, լճերի և առափնյա ջրերի պահպանությանը (3(1)-3(7) հոդված)
- Գետերի ավազանների տարածքների բնութագրերի վերլուծություն (5-րդ հոդված)
- Ջրի որակի մոնիտորինգի ծրագրերի ստեղծում (8-րդ հոդված)
- Գետերի ավազանների կառավարման պլանների կազմում, խորհրդակցություններ հանրության հետ և այդ պլանների հրապարակում (13-րդ և 14-րդ հոդվածներ)

Ժամանակացույց. 2000/60/ԵՀ հրահանգի սույն դրույթները ենթակա են կիրարկման սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո 5 տարվա ընթացքում:



ԳԵՏԵՐԻ ԱՎԱԶԱՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄ և ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ՝ ՈՒՂՂՎԱԾ ԱՇԽԱՐՀԻ ԳԵՏԵՐԻ, ԼՃԵՐԻ և ԱՌԱՓՆՅԱ ՋՐԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆԸ (3(1)-3(7) ՀՈՒՎԱԾ)

1. Հատկորոշել առանձին գետային ավազանները, որոնք գտնվում են երկրի տարածքում, և դրանք վերագրել անհատական գետավազանային տարածքների: Ապահովել, որ ավելի քան մեկ երկրի տարածքը ընդգրկող գետավազանը վերագրվի միջազգային գետավազանային տարածքի.
2. Ապահովել համապատասխան վարչական միջոցառումները, ներառյալ համապատասխան իրավասու մարմնի հատկորոշումը/սահմանումը յուրաքանչյուր գետավազանային տարածքում Հրահանգով սահմանված կանոնների իրականացման համար (ներառյալ ցանկացած միջազգային գետավազանային տարածքի մասի համար.



Action funded by the
EUROPEAN UNION



ԳԵՏԵՐԻ ԱՎԱԶԱՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄ և ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ՝ ՈՒՂՂՎԱԾ ԱՇԽԱՐՀԻ ԳԵՏԵՐԻ, ԼՃԵՐԻ և ԱՌԱՓՆՅԱ ՋՐԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆԸ (3(1)-3(7) ՀՈՒՎԱԾ)

3. Ապահովել, որ Հրահանգի 4-րդ հոդվածով սահմանված շրջակա միջավայրի նպատակներին հասնելու համար սահմանված պահանջները և, մասնավորապես, բոլոր միջոցառումների ծրագրերը համակարգված են գետավազանի ամբողջ տարածքի համար: Պետք է ձգտել համապատասխան համակարգման հաստատման միջազգային գետավազանային տարածքների համար:
4. Անդամ երկրները կարող են գոյություն ունեցող ազգային կամ միջազգային մարմինն հաստատել որպես լիազորված մարմին Հրահանգի նպատակների համար:
 - ջազգային մարմինն հաստատել որպես լիազորված մարմին Հրահանգի նպատակների համար:
5. Անդամ երկրները պարտավոր են որոշել իրավասու մարմիններին:



3(1)-3(7) ՀՈՒՎԱԾԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Մշակել միջազգային համագործակցության մասին համապատասխան փաստաթուղթ՝ մեկից ավելի երկրի տարածք ընդգրկող ջրավազանները միջազգային գետավազանային տարածքում ընդգրկումը ապահովելու համար (1-ին-5-րդ տարի)
- Փոփոխել Ջրային օրենսգիրքը և այլ իրավական ակտեր՝ հստակեցնելով ջրավազանային կառավարման մարմինների իրավասությունը, ինչպես նաև ջրավազանային կառավարման խորհուրդների դերը (օրենքներ 1-ին և 2-րդ տարի, ենթաօրենսդրական ակտեր՝ 3-րդ տարի):
- Ջրավազանային կառավարման մարմինների կարողությունների հզորացում (3-րդ տարի-5-րդ տարի)

ԳԵՏԵՐԻ ԱՎԱԶԱՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ (5-ՐԴ ՀՈԴՎԱԾ)

1. Յուրաքանչյուր անդամ երկիր պետք է ապահովի, որպեսզի իր տարածքում գտնվող յուրաքանչյուր գետավազանային տարածքի կամ միջազգային գետավազանային տարածքի հատվածի համար իրականացվի

- բնութագրիչների վերլուծություն,
- մակերևութային և ստորերկրյա ջրերի վիճակի վրա մարդածին գործունեության ազդեցության ուսումնասիրություն,
- ջրօգտագործման տնտեսական վերլուծություն
- համաձայն Հրահանգի հավելվածներ II և III-ում սահմանված տեխնիկական մանրամասնությունների:

2. Նշված վերլուծություններն ու ուսումնասիրությունները պետք է վերանայվեն և, անհրաժեշտության դեպքում, թարմացվեն Հրահանգը ուժի մեջ մտնելուց ամենաուշը 13 տարի անց, իսկ այնուհետև՝ յուրաքանչյուր վեց տարին մեկ անգամ:



ՀՐԱՀԱՆԳՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Անդամ երկրները

1. պետք է որոշեն մակերևութային ջրային մարմինների տեղադիրքը և սահմանները,

2. պետք է իրականացնեն այդ մարմինների նախնական բնութագրում՝ համաձայն Հրահանգում նշված մեթոդոլոգիայի

- Մակերևութային ջրային մարմինները գետավազանային տարածքի սահմաններում պետք է որոշվեն կամ ըստ հետևյալ մակերևութային ջրերի դասերի՝ գետեր, լճեր, անցումային ջրեր, առափնյա ջրեր, կամ էլ սահմանվեն որպես արհեստական ջրային մարմին կամ խիստ փոփոխված մակերևութային ջրային մարմին:
- Մակերևութային ջրերի յուրաքանչյուր դասի համար անհրաժեշտ է գետավազանային տարածքի ներսում առանձնացնել համապատասխան մակերևութային ջրային մարմիններ՝ ըստ տիպի՝ “Համակարգ Ա” կամ “Համակարգ Բ”-ում:
- Անդամ երկրները պետք է Հանձնաժողովին ներկայացնեն համակարգ Ա-ի համաձայն առանձնացված տիպերի աշխարհագրական դիրքը բնութագրող քարտեզ կամ քարտեզներ:

ՀՐԱՀԱՆԳՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. Մակերևութային ջրային մարմինների յուրաքանչյուր տիպի համար հղումային պայմանների մշակում

- տիպային հիդրոմորֆոլոգիական և ֆիզիկա-քիմիական որակի պայմաններ, որոնք մակերևութային ջրային մարմնի տվյալ տիպի համար կներկայացնեն գերազանց էկոլոգիական վիճակ համարվող հիդրոմորֆոլոգիական և ֆիզիկա-քիմիական որակի տարրերի արժեքները համաձայն հրահանգի աղյուսակների:
- տիպային կենսաբանական հղումային պայմաններ, որոնք կներկայացնեն գերազանց էկոլոգիական, վիճակ համարվող կենսաբանական որակի տարրերի արժեքները համաձայն Հրահանգի աղյուսակների:

4. Ճնշումների բացահայտում

- Անդամ երկրները պետք է հավաքագրեն և պահպանեն տեղեկատվություն այն էական մարդածին ճնշումների տիպի և չափի վերաբերյալ, որոնց ենթարկվում են գետավազանի բոլոր ջրային մարմինները, մասնավորապես գնահատել և բացահայտել

ՀՐԱՀԱՆԳՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- աղտոտման էական կետային և ցրված աղբյուրները,
- էական ջրառները քաղաքային, արդյունաբերական, գյուղատնտեսական և ջրօգտագործման այլ նպատակների համար, ներառյալ տարեկան ընդհանուր ջրապահանջը և սեզոնային տատանումները, ինչպես նաև բաշխման համակարգերում ջրակորուստները և այլն
- էական մորֆոլոգիական փոփոխությունները՝ կապված ջրային մարմինների հետ և այլն

5. Ազդեցությունների գնահատում

- Անդամ երկրները պետք է գնահատեն վերոնշյալ ճնշումների նկատմամբ մակերևութային ջրային մարմինների խոցելիությունը:

ՀՐԱՀԱՆԳՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ստորերկրյա ջրերի համար պետք է իրականացվի՝

- Ստորերկրյա ջրերի նախնական բնութագրում՝ յուրաքանչյուր ստորերկրյա ջրային մարմնի համար գնահատելու դրանց օգտագործումը և Հրահանգով սահմանված նպատակներին չհասնելու ռիսկի աստիճանը:
- մանրամասն բնութագրում այն ստորերկրյա ջրային մարմինների կամ ջրային մարմինների խմբերի համար, որոնք բացահայտվել են որպես ռիսկային:
- մարդկային գործունեության ազդեցության վերլուծությունը, այն է՝ ջրառի կետերի տեղադիրքը, միջին տարեկան քանակը, արտանետումների ծավալները, արտանետվող ջրի քիմիական բաղադրությունը:
- Ստորերկրյա ջրերի մակարդակների փոփոխությունների ազդեցության վերլուծություն:
- Ստորերկրյա ջրերի որակի վրա աղտոտման ազդեցության վերլուծություն:



ՀՐԱՀԱՆԳՈՎ ՄԱՀՄԱՆՎԱԾ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Տնտեսական վերլուծությունը պետք է անհրաժեշտ մանրամասնության բավարար տեղեկատվություն պարունակի

- ջրային ոլորտի ծառայությունների ծախսաձևերի սկզբունքներին համապատասխան անհրաժեշտ հաշվարկներ՝ հաշվի առնելով գետավազանային տարածքում ջրառաջարկի և ջրապահանջի երկարաժամկետ կանխատեսումները
- գնահատի ջրային ոլորտի ծառայությունների ծավալը, գինը և հարակից ծախսերը և
- գնահատի անհրաժեշտ ներդրումները, ներառյալ նման ներդրումների կանխատեսումները
- հիմնվելով միջոցառումների համար անհրաժեշտ պոտենցիալ ծախսերի վրա՝ տա եզրակացություններ ջրօգտագործմանն առնչվող՝ ծախսային առումով ամենաօպտիմալ միջոցառումների վերաբերյալ:

5-ԲԴ ՀՈԴՎԱԾԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Փոփոխել Ջրային օրենսգիրքը՝ սահմանելով Դիրեկտիվով նախատեսված <ջրային մարմին> հասկացությունը և բնութագրման չափանիշները
- Փոփոխել <Ջրի ազգային ծրագրի մասին> ՀՀ օրենքը՝ հիմնվելով Դիրեկտիվով նախատեսված <ջրային մարմին> հասկացության և բնութագրման չափանիշների վրա /հոդված 10/
- Փոփոխել <Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին> ՀՀ օրենքը Դիրեկտիվով նախատեսված գնահատման չափանիշները արտացոլելու համար /հոդված 10/
- Վերանայել ՀՀ կառավարության՝ N23-Ն, 2010թ. ըստ դասակարգման՝ ջրային ռեսուրսների օգտագործման և պահպանության պահանջները սահմանելու մասին որոշումը
- Վերանայել ՀՀ կառավարության՝ N174, 2006թ. ՀՀ կառավարության կամ ջրօգտագործողի պահանջով ջրային ռեսուրսների ամբողջական կամ մասնակի գնահատման և դրա մեխանիզմների սահմանման կարգի մասին որոշումը



ԶՐԻ ՈՐԱԿԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԾՐԱԳՐԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ (Ց-ՐԴ ՀՈԴՎԱԾ)

- Ապահովել ջրի վիճակի մոնիտորինգի ծրագրերի հաստատումը/ներդրումը՝ յուրաքանչյուր գետավազանային տարածքում ջրի վիճակի մասին համահունչ և համապարփակ պատկերացման համար:
- մակերևութային ջրերի համար մոնիտորինգի ծրագրերը պետք է ընդգրկեն.

ա/ հոսքի ծավալը ու մակարդակը կամ արագությունը՝ այն մանրամասնությամբ, որ հնարավոր լինի որոշել էկոլոգիական և քիմիական վիճակներն ու էկոլոգիական պոտենցիալը,

բ/ էկոլոգիական վիճակը, քիմիական վիճակը ու էկոլոգիական պոտենցիալը,

գ/ ստորերկրյա ջրերի համար ծրագրերը պետք է ներառեն քիմիական և քանակական վիճակի մոնիտորինգ:

- Մոնիտորինգի պահանջները, տեխնիկական կանոնակարգերը և ջրի կարգավիճակի մոնիտորինգի և վերլուծության ստանդարտացված մեթոդները պետք է իրականացվեն Դիրեկտիվին համապատասխան:

Ց-ԸՂ ՀՈՒՎԱԾԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Փոփոխել Ջրային օրենսգիրքը՝ ներառելով Դիրեկտիվով սահմանված մոնիտորինգին ներկայացվող պահանջները (Հոդված 19.1)
- Փոփոխել <Ջրի ազգային ծրագրի մասին> ՀՀ օրենքը՝ Դիրեկտիվով սահմանված մոնիտորինգի պլանին ներկայացվող պահանջները ներառելու համար (Հոդված 21)
- Վերանայել ՀՀ կառավարության՝ N639, 2003թ. ջրային ռեսուրսների մոնիտորինգի իրականացման և հաշվետվությունների գրանցման կարգը հաստատելու մասին որոշումը
- Մշակել մոնիտորինգի ծրագրեր Դիրեկտիվի պահանջներին համապատասխան (տարի 4-5)
- Մոնիտորինգի մարմինների կարողությունների հզորացում, ներառյալ համակարգի տեխնիկական վերազինում (Տարի 3-5)



Action funded by the
EUROPEAN UNION

ԳԵՏՏԵՐԻ ԱՎԱԶԱՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆՆԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ, ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ և ԱՅԴ ՊԼԱՆՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ (13-ԲԴ և 14-ԲԴ ՀՈԴՎԱԾՆԵՐ)

- Ապահովել, որ գետավազանային կառավարման պլանն մշակվում է յուրաքանչյուր գետավազանային տարածքի համար պարունակելով Դիրեկտիվով սահմանված տեղեկությունները:
- Միջազգային գետավազանային տարածքի դեպքում, պետությունը պետք է ապահովի համակարգումը նպատակ ունենալով մեկ համընդհանուր գետավազանային կառավարման պլանի մշակում կամ իր տարածքում գտնվող միջազգային գետավազանային տարածքի մասի վերաբերյալ գետավազանային կառավարման պլանի մշակում:
- Գետավազանային կառավարման պլանները պետք է վերանայվեն և թարմացվեն սույն դիրեկտիվի ուժի մեջ մտնելուց ամենաուշը 15 տարի անց, և դրանից հետո յուրաքանչյուր վեց տարին մեկ անգամ:



Action funded by the
EUROPEAN UNION



ՓԵՏԵՐԻ ԱՎԱԶԱՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆՆԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ, ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ և ԱՅԴ ՊԼԱՆՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ (13-ԸԴ և 14-ԸԴ ՀՈԴՎԱԾՆԵՐ)

Ապահովել, որ կառավարման պլանները հրատարակվեն և հասարակության (ներառյալ ջրօգտագործողների) մեկնաբանությունների ու առաջարկությունների համար մատչելի դարձվեն

- պլանի մշակման ժամանակացույցն ու պատրաստման ծրագիրը, ներառյալ նախատեսվող խորհրդատվական միջոցառումների իրականացումը՝ պլանով ծածկվող ժամկետից առնվազն 3 տարի առաջ,
- գետավազանում ի հայտ եկած ջրի կառավարման կարևոր հիմնախնդիրների վերաբերյալ միջանկյալ զեկույցը՝ պլանով նախատեսված ժամկետի սկզբից առնվազն 2 տարի առաջ,
- գետավազանային կառավարման պլանների նախնական տարբերակները՝ պլանով ծածկվող ժամկետի սկզբից առնվազն մեկ տարի առաջ:
- պետք է առնվազն վեց ամիս նախատեսվի վերը նշված փաստաթղթերն գրավոր մեկնաբանելու համար:
- Կանոնները կիրառվում են նաև նորացված գետավազանային կառավարման պլանների համար:

13-ԸՂ ԵՒ 14-ԸՂ ՀՈՒՎԱԾՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Փոփոխել Ջրային օրենսգիրքը (Հոդված 17 և 20), <Ջրի ազգային ծրագրի մասին> ՀՀ օրենքը (Հոդված 15)՝ ներառելով Դիրեկտիվով սահմանված ջրավազանային կառավարման պլանների մշակմանը և հանրային քննարկումներին ներկայացվող պահանջները /Տարի 1/
- Վերանայել ՀՀ կառավարության N-1224, 2009թ. ՀՀ ստորերկրյա քաղցրահամ ջրերի հիդրոերկրաբանական հետազոտությունների իրականացման և ջրավազանային կառավարման պլանների մշակման կարգը հաստատելու մասին որոշումը /Եռամսյակ 1-2, Տարի 2/
- Մշակել և հրապարակել Սևան, Հրազդան, Հյուսիսային ջրավազանային տարածքների Կառավարման պլանի մշակման աշխատանքային ծրագրի և ժամանակացույցի, ներառյալ ձեռնարկվելիք խորհրդատվական միջոցառումների մասին փաստաթղթի նախագիծ 6 ամսվա ընթացքում առաջարկներ ներկայացնելու համար /Տարի 1-2/
- Մշակել և հրապարակել Սևան, Հրազդան, Հյուսիսային ջրավազանային տարածքներում հատկորոշված ջրի կառավարման հիմնական խնդիրների մասին միջանկյալ գեկույց 6 ամսվա ընթացքում առաջարկներ ներկայացնելու համար /Տարի 1-3/

13-ԸՂ ԵՒ 14-ԸՂ ՀՈՒՎԱԾՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Մշակել և հրապարակել Սևան, Հրազդան, Հյուսիսային ջրավազանային տարածքի կառավարման պլանի նախնական տարբերակը Դիրեկտիվի պահանջներին համապատասխան 6 ամսվա ընթացքում առաջարկներ ներկայացնելու համար /Տարի 1-4/
- Մշակել և հրապարակել Ախուրյան ջրավազանային տարածքի 2017-2022թթ., Արարատյան և Հարավային ջրավազանային տարածքների 2016-2021թթ. Կառավարման պլանի վերանայման աշխատանքային ծրագրի և ժամանակացույցի, ներառյալ ձեռնարկվելիք խորհրդատվական միջոցառումների մասին փաստաթղթի նախագիծ
- Կառավարման պլանի վերանայման նպատակով մշակել և հրապարակել Ախուրյան Արարատյան և Հարավային ջրավազանային տարածքներում հատկորոշված ջրի կառավարման հիմնական խնդիրների մասին միջանկյալ զեկույց
- Մշակել և հրապարակել Ախուրյան, Արարատյան և Հարավային ջրավազանային տարածքների վերանայված կառավարման պլանի նախնական տարբերակը

2007/60/ԵՀ ՀՐԱՀԱՆԳ ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

- Ներպետական օրենսդրության ընդունում և իրավասու մարմնի (իրավասու մարմինների) սահմանում
- Հեղեղման ռիսկի նախնական գնահատման իրականացում (4-րդ և 5-րդ հոդվածներ)
- Հեղեղումների վտանգի և ռիսկի քարտեզների կազմում (6-րդ հոդված)
- Հեղեղումների ռիսկի կառավարման պլանների կազմում (7-րդ հոդված)

Ժամանակացույց. 2007/60/ԵՀ հրահանգի սույն դրույթները ենթակա են կիրարկման սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո 5 տարվա ընթացքում □



ՀԵՂԵՂՄԱՆ ՌԻՍԿԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ (4-ՐԴ ԵՒ 5-ՐԴ ՀՈԴՎԱԾՆԵՐ)

1. Պետությունը իր տարածքում գտնվող յուրաքանչյուր ջրավազանի, կառավարման միավորի կամ միջազգային ջրավազանի մասի համար պետք է նախաձեռնի հեղեղումների ռիսկի նախնական գնահատում՝ հաշվի առնելով Հրահանգով սահմանված բովանդակությունը ու նպատակը և հատկորոշի այն տարածքները, որոնց համար եզրակացվում է, որ պոտենցիալ հեղեղումների զգալի ռիսկեր կան կամ կարող են դիտարկվել, որ տեղի կունենան:
2. Միջազգային ջրավազանի կամ մեկ այլ պետության հետ ընդհանուր կառավարման միավորի հատկորոշումը պետք է համակարգվի առնչվող անդամ պետությունների միջև:
3. Հրահանգում նկարագրված տարածքների համար հեղեղումների վտանգի քարտեզների պատրաստումը համաձայն Հրահանգով սահմանված բովանդակության:



Action funded by the
EUROPEAN UNION

ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ ՎՏԱՆԳԻ և ՌԻՍԿԻ ՔԱՐՏԵԶՆԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ (6-ՐԴ ՀՈԴՎԱԾ), ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆՆԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ (7-ՐԴ ՀՈԴՎԱԾ)

1. Հեղեղումների ռիսկի քարտեզների պատրաստում՝ համաձայն Հրահանգով սահմանված բովանդակության:
2. Հեղեղումների վտանգի քարտեզների և հեղեղումների ռիսկի քարտեզների պատրաստումը այլ պետությունների հետ համատեղ տարածքների համար ենթակա է շահագրգիռ պետությունների միջև տեղեկատվության նախնական փոխանակմանը:
3. Մշակել հեղեղումների ռիսկի կառավարման պլաններ, որոնք համակարգվում են ջրավազանային տարածքի մակարդակով կամ համաձայն Հրահանգի պահանջների՝ ռիսկային տարածքների միավորի կառավարման համար:

91/271/ԵՏՀ ՀՐԱՀԱՆԳ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԵՂՏԱԶՐԵՐԻ ՄԱՔՐՄԱՆ ՄԱՍԻՆ

- Ներպետական օրենսդրության ընդունում և իրավասու մարմնի (իրավասու մարմինների) սահմանում
- Քաղաքային կեղտաջրերի հավաքման և մաքրման իրավիճակի գնահատում
- Զգայուն ոլորտների և ազլումերացիաների որոշում (5(1) հոդված և Հավելված II)
- **Ժամանակացույց. 91/271/ԵՏՀ հրահանգի սույն դրույթները ենթակա են կիրարկման սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո 5 տարվա ընթացքում** □
- Քաղաքային կեղտաջրերի մաքրման պահանջների իրականացման համար տեխնիկական և ներդրումային ծրագրի կազմում (17(1) հոդված)
- **Ժամանակացույց. 91/271/ԵՏՀ հրահանգի սույն դրույթները ենթակա են կիրարկման սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո 6 տարվա ընթացքում** □



91/676/ԵՀ ՀՐԱՀԱՆԳ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ ԱՐՏԱՆԵՏՎՈՂ ՆԻՏՐԱՏՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՑՈՂ ԱՂՏՈՏՄԱՆ ԴԵՄ ՋՐԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

- Ներպետական օրենսդրության ընդունում և իրավասու մարմնի (իրավասու մարմինների) սահմանում
- Մոնիտորինգի ծրագրերի սահմանում (6-րդ հոդված)
- Աղտոտված կամ վտանգված ջրերի հայտնաբերում և նիտրատների նկատմամբ զգայուն գոտիների սահմանում (3-րդ հոդված)
- **Ժամանակացույց. 91/676/ԵՀ հրահանգի սույն դրույթները ենթակա են կիրարկման սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո 4 տարվա ընթացքում** □
- Պատշաճ գյուղատնտեսական գործելակերպի գործողությունների ծրագրերի և կանոնների սահմանում նիտրատների նկատմամբ զգայուն գոտիների համար (4-րդ եւ 5-րդ հոդվածներ)
- **Ժամանակացույց. 91/676/ԵՀ հրահանգի սույն դրույթները ենթակա են կիրարկման սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո 8 տարվա ընթացքում** □



ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԾՐԱԳՐԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ (6-ՐԴ ՀՈԴՎԱԾ)

- Խոցելի գոտիների հատկորոշման և վերանայման նպատակի համար պետությունը պետք է նիտրատի կոնցենտրացիայի մոնիտորինգ իրականացնի քաղցրահամ ջրերի նշանակված չափման կետերում Հրահանգի պահանջներին համապատասխան և կրկնի մոնիտորինգի ծրագիրը Հրահանգով սահմանված ժամկետների և պայմանների շրջանակներում:



Action funded by the
EUROPEAN UNION

ԱՂՏՈՏՎԱԾ ԿԱՄ ՎՏԱՆԳՎԱԾ ԶՐԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ և ՆԻՏՐԱՏՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԶԳԱՅՈՒՆ ԳՈՏԻՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ (Յ-ՐԴ ՀՈԴՎԱԾ)

- Աղտոտումից տուժած ջրերը և ջրերը, որոնք կարող են ազդվել շրջակա միջավայրի աղտոտումից պետք է հատկորոշվեն:
- Հողի բոլոր հայտնի տարածքները, որոնք հայտնվում են ջրերի և աղտոտվածության մեջ, նշանակվում են որպես խոցելի գոտի:
- Երբ պետության կողմից հայտնաբերված ջրերը ազդվում են այլ պետության ջրերի աղտոտումից, շահագրգիռ պետությունները կազմակերպում են այն հարցերը, որոնք անհրաժեշտ են այդ աղբյուրների հայտնաբերման և անհրաժեշտ միջոցների ձեռնարկման համար:
- Պետությունը պետք է անհրաժեշտության դեպքում վերանայի կամ ավելացնի խոցելի գոտիների նշանակումը, ինչպես նաև նվազագույնը չորս տարին մեկ հաշվի առնի նախորդ նշման պահին չնախատեսված փոփոխությունները և գործոնները: Նրանք վեց ամսվա ընթացքում պետք է Հանձնաժողովին ծանուցեն ցանկացած վերանայում կամ լրացում:



Action funded by the
EUROPEAN UNION

ՊԱՏՇԱՃ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՒ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ՆԻՏՐԱՏՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԶԳԱՅՈՒՆ ԳՈՏԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ (4-ՐԴ ԵՒ 5-ՐԴ ՀՈԴՎԱԾՆԵՐ)

- Հաստատել լավ գյուղատնտեսական գործելակերպերի կանոնագիրք կամ կանոնագրքեր, որոնք կամավոր հիմունքներով իրականացվում են ֆերմերների կողմից:
- Անհրաժեշտության դեպքում ստեղծել ծրագիր, ներառյալ ֆերմերների վերապատրաստումը և նրանց տեղեկատվության տրամադրումը՝ նպաստելով լավ գյուղատնտեսական գործելակերպերի կող(եր)ի կիրառմանը:
- Հաստատել խոցելի գոտիների նկատմամբ գործողությունների ծրագրեր:
- Գործողությունների ծրագրերը պետք է իրականացվեն հիմնադրման պահից չորս տարվա ընթացքում:
- Մշակել համապատասխան ծրագրեր և գնահատել գործողությունների ծրագրերի արդյունավետությունը:
- Վերանայել և անհրաժեշտության դեպքում վերանայել գործողությունների ծրագրերը, ներառյալ առնվազն յուրաքանչյուր չորս տարում ձեռնարկված լրացուցիչ միջոցները:



98/83/ԵՀ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ (ԵՀ) ՄԱՐԴՈՒ ԿՈՂՄԻՑ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՋՐԻ ՈՐԱԿԻ ՄԱՍԻՆ

- Ներպետական օրենսդրության ընդունում և իրավասու մարմնի (իրավասու մարմինների) սահմանում
- Խմելու ջրի ստանդարտների սահմանում (4-րդ և 5-րդ հոդվածներ)
- Մոնիտորինգի համակարգի ստեղծում (6-րդ և 7-րդ հոդվածներ)
- Սպառողներին տեղեկատվության տրամադրման համար մեխանիզմի ստեղծում (13-րդ հոդված)

Ժամանակացույց. 98/83/ԵՀ հրահանգի սույն դրույթները ենթակա են կիրարկման սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո 4 տարվա ընթացքում □



ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ (4-ՐԴ ԵՒ 5-ՐԴ ՀՈԴՎԱԾՆԵՐ)

- Ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ, որպեսզի մարդկանց օգտագործման համար նախատեսված ջուրը լինի մաքուր և օգտակար՝ Հրահանգում սահմանված նվազագույն պահանջներին համապատասխան: Հրահանգի իրականացման համար ընդունված միջոցառումները ոչ մի հանգամանքներում չպետք է թույլ տան, ուղղակի կամ անուղղակի, ջրի որակի ցանկացած վատթարացում, նախատեսված մարդկանց օգտագործման համար, եթե դա ունի նշանակություն մարդկանց առողջության պահպանման համար կամ խմելու ջրի արտադրման համար օգտագործվող ջրերի աղտոտվածության ցանկացած աճ կամ ավելացում:
- Հրահանգի համաձայն՝ սահմանել մարդկային սպառման համար նախատեսված ջրի կիրառելի արժեքներ:

ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍՏԵՂԾՈՒՄ (6-ԸՆ և 7-ԸՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ)

- Ապահովել, որ մարդու կողմից սպառման համար նախատեսված ջրի որակի պարբերական մոնիտորինգ իրականացվի՝ ստուգելու համար սպառողներին մատչելի ջուրը համապատասխանում է արդյոք սույն Հրահանգի պահանջներին: Իրավասու մարմինների կողմից համապատասխան մոնիտորինգի ծրագրերը սահմանվում են մարդու սպառման համար նախատեսված բոլոր տիպի ջրերի համար և պետք է համապատասխանեն Հրահանգով սահմանված նվազագույն պահանջներին:



ՄՊԱՌՈՂՆԵՐԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՄԵԽԱՆԻԶՄԻ ՍՏԵՂԾՈՒՄ (13-ՐԴ ՀՈԴՎԱԾ)

- Փոփոխել Ջրամատակարարման և օգտագործման կանոնները՝ արտացոլելու սպառողներին տեղեկատվության տրամադրումը Հրահանգով սահմանված պահանջներին համապատասխան:
- Մշակել նոր իրավական ակտ՝ արտացոլելու սպասարկման տարածքից դուրս գտնվող սպառողներին տեղեկատվության տրամադրումը Հրահանգով սահմանված պահանջներին համապատասխան:



ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ